

Մշակութային ինքնության չափումները եւ ետխորհրդային արդիականացման ձեւերը Հայաստանում

Այս երեք զեկույցներում ես փորձում եմ հիմնական գծերով ամփոփել արեւելահայ մշակութային ինքնության հարցին վերաբերող վերջին տարիների իմ հոդվածները: Այդ աշխատանքի հիմնական խթանը եղել է ետխորհրդային բարդ, խճճված իրադրության մեջ կողմնորոշվելու, մշակութային, սոցիալական եւ քաղաքական ինչ-ինչ իրողություններ հասկանալու ցանկությունը: Այդ մղումն է թելադրել եւ ձեւավորել նաեւ իմ՝ անհրաժեշտաբար հատվածական անդրադարձը նախորդ երկու դարերին վերաբերող որոշ վճռական զարգացումների եւ կենտրոնական թեմաների: Այստեղ հիմնական տեսական-մեկնաբանական շրջանակը արդիականացումն (modernization) է, որքանով որ այդ ժամանակաշրջանի արեւելահայ պատմությունը կարող է դիտվել արդիականացման արեւմտյան ընթացքի հետ ունեցած առնչությամբ (առնվազն որպես որոշ էլիտային նախագիծ) տեսանկյունից: Բայց այդ շրջանակն օգտագործվում է՝ հաշվի առնելով բազմաթիվ քննադատական վերանայումներ՝ արված մասնավորապես ետգաղութային ուսումնասիրությունների տեսանկյունից:

Սակայն արեւելահայության համար արդիության դարաշրջանն անքակտելիորեն կապված էր ռուսական կողմնորոշման հետ, այն նաեւ ռուսական-խորհրդային տիրապետության ժամանակաշրջանն էր: Ընդ որում՝ ռուսական կողմնորոշումը դադարում է լինելուց պարզապես կողմնորոշում եւ աստիճանաբար գրավում արեւելահայության (ռուսահայության) ողջ պատմական-մշակութային հորիզոնը: Այս հանգամանքը, իմ կարծիքով, ընդգծված հրատապություն է ստանում ետխորհրդային Հայաստանում՝ որպես, ասենք, ռուսական-խորհրդային մշակութային տիրապետությունը հաղթահարելու կամ մշակութային ապագադրությամբ խնդիր: Եթե արդիության ընդլայնված տեսանկյունը (օրինակ՝ որպես «այլընտրական արդիություններ», ‘alternative modernities’) թույլ է տալիս դիտարկել խորհրդային սոցիալիզմի փորձառությունը, ուրեմն եւ ետխորհրդային հասարակությունների պատմությունները, իր ժամանակի գլոբալ փոխակերպումների համատեքստում, ապա միաժամանակ ենթադրում է նոր տեսական-մեթոդաբանական մոտեցումների որդեգրում: Ըստ այդմ՝ համառոտ ձեւով ներկայացվում են հետազոտության այն տիրույթները, որոնք առավել տեղին են թվում այս նպատակին հասնելու համար. ետգաղութային ուսումնասիրություններ (Postcolonial studies), մշակութային ուսումնասիրություններ (Cultural studies): Քննարկվում են նաեւ մի խումբ հիմնական հղացքներ. ետգաղութատիրություն (postcolonialism), օրիենտալիզմ, գերիշխանություն (hegemony), ազգայնականություն եւ այլն: Ստորեւ ներկայացնում եմ զեկույցների ամփոփումները:

Հրաչ Բայադյան

Առաջին սեմինար

Ռուսական-խորհրդային գերիշխանություն եւ խորհրդահայ ազգայնականություն

19-րդ դարի սկզբին ռուսական կայսրության ծավալումը դեպի Կովկաս, իսկ մյուս կողմից՝ արեւելահայության պարտադրված ռուսական կողմնորոշումը (որպես «չարյաց փոքրագույնը»), պատմական իրադրության երկու երեսներն էին: Այս մասին եւ իրադարձությունների հետագա ընթացքի մասին շատ բան կարելի է իմանալ (հատկապես, երբ խոսքը գաղափարաբանության մասին է)՝ կողք-կողքի դնելով, օրինակ, Ա. Պուշկինի եւ Խ. Աբովյանի տեքստերը: Ընդ որում՝ չպետք է մոռանալ, որ

Աբովյանը բնավ էլ ռուսասեր չէր, իսկ Պուշկինը համատեղում էր կայսրության քննադատի եւ կայսերական բանաստեղծի դերերը:

Եթե Ա. Պուշկինի գրությունների («Կովկասի գերին», «Ճանապարհորդություն դեպի Էրզրում» եւ այլն) միջոցով կայսերական ողջ բազմազանությունը՝ ազգեր, տարածքներ, մշակույթներ, միավորվում էին ռուսական երեւակայության մեջ՝ կազմելով գաղութացման գրական համատեքստը (Կ. Հոկանսոն), ապա Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպում բառացիորեն օրհնվում է այն պահը, երբ ռուսի ոտքը մտավ հայոց հողը՝ հայության վերածնությունը, արդիության սկիզբն ու հետագա ընթացքը (թվում է՝ ընդմիջտ) կապելով ռուսական տիրապետության հետ:

Ռուսաստանում կայսրության ժողովուրդների մշակույթների նկատմամբ նոր մոտեցում է ձեւավորվում 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին: Այս շրջանում են կատարվում Անիի պեղումները, իսկ 1916 թվականին Վ. Բրյուսովի խմբագրությամբ տպագրվում է «Հայաստանի պոեզիան» գիրքը, որի առաջաբանում նա շատ բարձր է գնահատում հայ միջնադարյան գրականությունը: Սա խոսում է ռուսական գերիշխանության բնույթի մեջ կատարված փոփոխության մասին. Հայաստանը գնահատվում է որպես հին, հարուստ մշակույթի երկիր, բայց հենց Ռուսաստանն էր հայության գոյության երաշխավորը, նրա մշակույթը գնահատողն ու ներկայացնողը: Սա նաեւ նոր տեսակի օրիենտալիզմ էր:

1930-ականները համարվում են խորհրդային ժողովուրդներին պատմությամբ եւ ավանդությամբ ապահովելու ժամանակաշրջան: Բայց դրանք ոչ այնքան աուտենտիկ, որքան պետության կողմից եւ ազգային էլիտաների խանդավառ մասնակցությամբ հորինված ավանդույթների էին՝ անխուսափելիորեն զետեղված սոցիալիստական արդիության մեջ: Հենց այս տարիներին ձեւավորվեցին ազգային մշակույթի եւ ինքնության մեծապես կլիշեավորված էսենցիալացնող հռետորությունը եւ ազգային մշակույթը «էկզոտիկականացնող» օրիենտալիստական պրակտիկաները (Թ. Մարտին):

1960-ականներին, հիմնականում գեղարվեստական գրականության միջոցով, խորհրդահայ վերնախավի մշակած ազգայնական գաղափարաբանությունը, որը մեծապես ապավինում էր 1930-ականներին ձեւավորված «ազգային ավանդությանը», օժանդակություն էր ստանում եւ միաժամանակ սահմանափակված էր խորհրդային ինստիտուցիոնալ եւ դիսկուրսային պրակտիկաներով: Ռուսականությունը այդ ազգայնականության անբաժան մասն էր կազմում ճիշտ այնպես, ինչպես, ասենք, ռուսական կողմնորոշումը մարմնացնող «մեր մեծերի» (այսօրվա ազգայնական պոպուլիզմի կլիշեների մեկը) Խ. Աբովյանի, Հ. Թումանյանի եւ ուրիշների փառաբանությունն է վերածվել ռուսահպատակության ամենօրյա ծեսի:

Այս առումով՝ արեւելահայ ինքնության վերլուծության համար նույնքան սկզբունքային է արեւելահայ-արեւմտահայ եւ խորհրդահայ-սփյուռքահայ փոխհարաբերությունների քննությունը: Այս հարցերի դիտարկումը օգնում է տեսնել ռուսական-խորհրդային գերիշխանության պատմականորեն ձեւավորված կառույցի եւ Հայաստանում մշակութային ապագաղութացման խնդրի բարդությունը: Ազգային գաղափարաբանությունը Հայաստանում երբեք պատշաճորեն չի զետեղվել եւ չի քննարկվել ժամանակակից բանավեճերի համատեքստում, մանավանդ՝ ետխորհրդային նորահայտ պայմանները հաշվի առնելով: Ուստի իմ պնդումները այն մասին, թե ռուսական կողմնորոշումը՝ արդեն որպես ինքնին հասկանալի ռուսահպատակություն, դարձել է արեւելահայ ինքնության անքակտելի մասը կամ որ ռուսական-խորհրդային գերիշխանությունը եւ խորհրդահայ ազգայնականությունը

իրար կապված են թաքուն մեղսակցությամբ եւ այլն, պետք է ընդունել ավելի շուտ որպէս բանավեճի հրավեր, քան վերջնական եզրահանգումներ:

Երկրորդ սեմինար

2000-ականներ. (վերա) արդիականացման որոշ միտումներ Հայաստանում

Ետխորհրդային Հայաստանը որոշ ընդհանուր գծերով հիշեցնում է Ետգաղութային երկրներին, որոնց նկարագրության համար 1960-ականներին ներմուծվեց նորգաղութատիրություն (neo-colonialism) տերմինը: Բայց ռուսական տնտեսական տիրապետության վերահաստատումը Հայաստանում ուղեկցվում է պետության վրա միջազգային ուժերի եւ անդրազգային կապիտալի հարաճուն ազդեցությամբ: Կարելի է առանձնացնել Հայաստանում կատարվող սոցիալ-մշակութային փոխակերպումների երկու առավել բնութագրական եւ փոխկապակցված ընթացքեր. սպառողական մշակույթի տարածումն ու յուրացումը եւ տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների լայնածավալ օգտագործումը: Այս սխեման թույլ է տալիս նոր պայմաններում վերածելակերպել եւ արդյունավետորեն քննարկել մի շարք հրատապ թեմաներ, օրինակ, ի՞նչ է պատահում ազգային գաղափարաբանությանը սպառողականության տիրապետության պայմաններում (սպառողականություն եւ ազգայնականություն): Այնուհետեւ, ո՞րն է այսպէս կոչված «ազգային մտավորականի»՝ ենթադրաբար այդ գաղափարաբանությունը մարմնավորողի, նոր կարգավիճակը: Իմ պնդումն այս առնչությամբ այն է, որ սպառողական («ցածր») մշակույթի տարածման եւ արմատացման միջոցով իշխանությունը ըստ էության կարողացավ խաղից հանել մտավորականությանը՝ «բարձր» մշակույթի կրողին, յուրացնել եւ առանց ավելորդ կամ անցանկալի միջնորդների օգտագործել ազգայնական հռետորությունը: Իսկ լուսանցքում հայտնված մտավորականության կողմից «բարձր» («հոգեւոր», «իսկական», «բուն ազգային» եւ այլն) արժեքների ջատագովությունն առավելապէս եղել է կորցրած արտոնյալ կարգավիճակը վերագտնելու ջանք:

Իրականում, Ետխորհրդային շրջանի մի շարք առանձնահատկություններ հասկանալու համար շատ տեղին է հենց սպառողականության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների հարաբերության քննությունը: 2000-ականների սկզբին տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերության ոլորտում Հայաստանի «մեծ պոտենցիալով» եւ գլոբալ շուկա դուրս գալու հնարավորությամբ ոգեւորությունը վկայում էր ինքն իրեն խորհրդային համատեքստից անջատելու եւ առանձին տեսնելու Ետխորհրդային մտավորական անընդունակության մասին (չհաղթահարված ռուսական-խորհրդային գերիշխանության հարցը): Տեղեկատվություն եւ գիտելիք ստեղծելու Հայաստանի ներկա կարողությունների, հասարակության տեղեկատվական կարիքների կառուցվածքի եւ հաղորդակցության նախընտրելի ձեւերի քննությունն ակներեւ է դարձնում, որ չկան այս ասպարեզին վերաբերող իրատեսական եւ հավակնոտ ծրագրեր, որ նոր տեխնոլոգիաների յուրացումն ու գործածումը կատարվում է ոչ թե գիտության, կրթության կամ տնտեսության մեջ, այլ սոցիալական ոլորտում՝ հիմնականում ծառայելով ժամանցային նպատակների (հասարակության վերաարդիականացման եղանակի հարցը): Ավելին, այս տիրույթում առկա բարդ հարցերը եւ պատշաճ նախագծերի բացակայությունը քողարկվում են «տեղեկատվական անվտանգության» ուռճացված թեմայով: Նշանակությունների դաշտի նման կրճատումն ու պարզունակացումը ուղեկցվում է սոցիալական, մշակութային խնդիրների «ռազմականացմամբ» եւ տեղափոխմամբ «հայրենասիրության» եւ «ազգային շահի» հարթություն

(հասարակական կապակցվածություն եւ համերաշխություն հաստատելու կարողության եւ ձեւերի հարցը):

Երրորդ սեմինար

Եզրակացություններ. ինչպես դառնալ ետխորհրդային

Եթե ընդունենք, որ Հայաստանի Հանրապետության ստեղծմամբ արեւելահայության մոտ երեքհարյուրամյա ռուսական կողմնորոշումը հասավ իր հիմնական նպատակին, ապա Խորհրդային Միության փլուզումից ավելի քան քսան տարի անց, թվում է, տեղին է հարցնել՝ ինչպե՞ս վարվել այդ կողմնորոշման հետ: Պե՞տք է, եւ եթե այո՛, հնարավո՞ր է ազատվել դրանից, երբ, ինչպես վերը ենթադրեցի, այդ կողմնորոշումը, արդեն որպես ռուսահպատակություն, վաղուց արեւելահայ ինքնության անբաժան մասն է դարձել: Ավելորդ չէ նկատել, որ ռուսական-խորհրդային գերիշխանության հաղթահարման տարատեսակ պրակտիկաները ներկա պայմաններում թվում են հնարավոր միայն որպես մտավորական հանձնառություն եւ լուսանցքային գործունեություն՝ առանց տեսանելի ապագայում ինստիտուցիոնալ հովանի ստանալու որեւէ հեռանկարի:

Որոշ իմաստով՝ այն կարելի է հասկանալ որպես ավանդության քննադատական վերամեկնաբանություն, որի ազդակները ելնում են ներկա հրատապ խնդիրներից եւ որի հիմնական նպատակը ավանդության դիսկուրսային շրջանակի վերաքննությունն է: Մի աշխատանք որը կարող է կատարվել բազմաթիվ ուղղություններով ու միջոցներով: Այնտեղ, ուր այդ գերիշխանությունը դիմադրված է կամ կասկածի տակ առնված՝ կպահանջվի այդ դիմադրության արտիկուլացումը, այլ տեղերում՝ նրա ինքնաակնհայտության խնդրականացումը տարբեր ձեւերով:

Բազմաթիվ են ինչպես քննադատական անդրադարձի կարոտ ներկայացման տիրապետող ձեւերը, այնպես էլ մշակութային դիմադրության տեղերն ու եղանակները: Ես ինքս արել եմ այդպիսի վերլուծության փորձեր (այլ հարց է, թե ինչ հաջողությամբ) եւ զեկուցման մեջ կներկայացնեմ դրանցից մի քանիսը: Ազգային գաղափարաբանության քննադատության անհրաժեշտության մասին արդեն նշվեց վերը: Դրանից անբաժան է արեւելահայության ինքնատիկնտալացման հարցը («Հայաստանը թանգարան է բաց երկնքի տակ»): Մեկ ուրիշ կարելի է թեմա է Անդրկովկասի (ներկայիս Հարավային Կովկասի)՝ որպես ռուսական-խորհրդային ժառանգության եւս մեկ օրինակի, ըստ ընդունված տերմինի՝ «հորինված» ('invented') կամ մշակութապես կառուցված տարածաշրջանի քննությունը: Այստեղ գործում է տարատեսակ գաղափարաբանությունների մի խայտաբղետ փունջ՝ «ռուսական քաղաքակրթող առաքելությունից» ու ռուսական-խորհրդային օրինատալիզմից մինչեւ «Սառը պատերազմը»:

Դարձյալ կանդրադառնամ Հրանտ Մաթեոսյանի գրություններին, որոնք հարուստ նյութ են տրամադրում մշակութային դիմադրության հարցի դիտարկման համար: Հատկապես հետաքրքրական է սոցիալիստական եւ ազգայնական հռետորություններից խուսափելու եւ մի երրորդ տեսանկյուն որդեգրելու եւ այդ տեսանկյան ընձեռած հնարավորությունների հարցը:

Այս աշխատանքն անհնար է կատարել առանց որդեգրելու նոր մոտեցումներ ու տեսություններ: Այս հարցը եւ մասնավորապես ետխորհրդային իրադրության մեջ ետգաղութային ուսումնասիրությունների կիրառության հնարավորությունը կքննարկվեն զեկուցման վերջում: